ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

24 հունվար 2012թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 246 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ժորժիկ Ավետիքի Մինասյանը՝ Կալինինի փողոցի թիվ 246 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 600.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 714.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Ժորժիկ Մինասյանը ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 414.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառույց և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնք կառուցվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Կալինինի փողոցի թիվ 246 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 900.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

1. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 246 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 900.0քմ մակերեսով, քաղ. Ժորժիկ Ավետիքի Մինասյանի /ծնված՝ 25.04.1921թ./ սեփականության իրավունքով:
2. Կալինինի փողոցի թիվ 246 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 414.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցը և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել քաղ. Ժորժիկ Մինասյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

24 հունվար 2012թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 668-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ /2248.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և հողային հաշվեկշռի կազմման նպատակով, Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 668-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 2248.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 668-005 /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 668-005 ծածկագրով, 2248.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Սարի փողոց թիվ 21/1:
2. Նշված 2248.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում՝ որպես «Բնակավայրերի հողերի» այլ հողեր:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 668-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 668-005 նոր ծածկագրով, 2248.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

24 հունվար 2012թ.

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1582-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 20-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ստեղծել Դիլիջանի քաղաքային համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը.

1) Սանթրոսյան Արմեն – քաղաքային համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ,
2) Թամամյան Համլետ – քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի քարտուղար,
3) Մանթաշյան Սամվել - քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
4) Ժամհարյան Ալեկո - քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ,
5) Մարկոսյան Վաղինակ - քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան, հանձնաժողովի անդամ,
6) Թամրազյան Արև – քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ,
7) Հովհաննիսյան Արմենակ - քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ-աուդիտոր, հանձնաժողովի անդամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային
համայնքի ղեկավարի 2012 թվականի
հունվարի 24-ի N 14 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է արտակարգ իրավիճակների հետևանքով Դիլիջանի քաղաքային համայնքում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման տարածքից, հետևանքների բնույթից և նշանակությունից, կազմակերպվում է Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված և մշտական գործող հանձնաժողովի կողմից:

3. Գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման ու վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

5. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3) գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

6. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա դեպքի մասին հանձնաժողովը հայտնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչություն:

7. Տեղեկատվությունը ներառում է՝

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

8. Դիլիջանի քաղաքային համայնքի հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.

3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.

4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

9. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմում՝ ըստ ուղղությունների կարող են ընդգրկվել նաև արտակարգ իրավիճակների, առողջապահության, գյուղատնտեսության, կապի և տրանսպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

25 հունվար 2012թ.

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 54.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂ. ՀԱՍՄԻԿ ՆԻԿՈԼԱԵՎԱՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Հասմիկ Նիկոլանան՝ 26 Կոմիսարների թիվ 20 հասցեի իր տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, 26 Կոմիսարների փողոցի թիվ 20 հասցեի տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 400.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվում է 54.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացու սեփականության իրավունքը (400.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում 26 Կոմիսարների փողոցի թիվ 20 հասցեի տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 54.0քմ հողամասի նկատմամբ

ճանաչել քաղ. Հասմիկ Լիպարիտի Նիկոլաևայի սեփականության իրավունքը: Այսպիսով, 26 Կոմիսարների փողոցի թիվ 20 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 454.0քմ /400.0քմ+54.0քմ/մինչև 20%/:

2. Քաղ.Հասմիկ Նիկոլաևային պատկանող 454.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ 26 Կոմիսարների փողոց թիվ 20/3:

3. Պարտավորեցնել քաղ. Հասմիկ Նիկոլաևային.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

25 հունվար 2012թ.

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 40 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 189.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂ. ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. օգոստոսի 5-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Խորհուրդների /նախկինում Սովետների/ փողոցի թիվ 40 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Արամ Յուրիկի Վարդանյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, Խորհուրդների փողոցի թիվ 40 հասցեի տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 1183.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվում է 189.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացու սեփականության իրավունքը (1183.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցում և ինքնակամ կառուցված օժանդակ շինություններ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Խորհուրդների /նախկինում Սովետների/ փողոցի թիվ 40 հասցեի տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 189.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Արամ Յուրիկի Վարդանյանի սեփականության իրավունքը: Այսպիսով, Խորհուրդների փողոցի թիվ 40 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 1372.0քմ /1183.0քմ+189.0քմ/մինչև 20%/:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումը և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Արամ Վարդանյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

25 հունվար 2012թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 694-001, 694-002 ԵՎ 694-003 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 694-001, 694-002 և 694-003 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 5850.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 694-026: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» այլ հողերի կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 694-026 ծածկագրով, 5850.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Թբիլիսյան խճուղի թիվ 103/4:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 694-001, 694-002 և 694-003 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 694-026 նոր ծածկագրով, 5850.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

25 հունվար 2012թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻԶԵ ՓՈՂՈՑԻ III ՆՐԲ. ԹԻՎ 16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ռադիկ Վազգենի Բեգլարյանը՝ Օրջոնիկիձե փողոցի III նրբ. թիվ 16 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի չափը 540.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 285.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Ռադիկ Բեգլարյանը ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառույցներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնք կառուցվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված 285.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Օրջոնիկիձե փողոցի III նրբ. թիվ 16 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 825.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի III նրբ. թիվ 16 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 825.0քմ մակերեսով, քաղ. Ռադիկ Վազգենի Բեգլարյանի /ծնված՝ 22.08.1958թ./ սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառույցները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Ռադիկ Բեգլարյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

25 հունվար 2012թ.

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՄԱՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ I ՆՐԲ. ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2006թ. դեկտեմբերի 19-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Կամարինի փողոցի I նրբ. թիվ 9 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկտմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Յուրի Դանելի Սանթրոսյանը:
Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասը բաղկացած է 2 գույքային միավորներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 140.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 136.0քմ՝ 106.0քմ և 30.0քմ մակերեսներով: Չափի փոփոխման հարցում սեփականատերը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Կամարինի փողոցի I նրբ. թիվ 9 հասցեի 136.0քմ /106.0քմ և 30.0քմ մակերեսներով/ տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ քաղ. Յուրի Դանելի

Սանթրոսյանի սեփականության իրավունքով:
2. Քաղ. Յուրի Սանթրոսյանի տնամերձ հողամասի երկրորդ գույքային միավոր հանդիսացող 30.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կամարինի փողոց I նրբ. թիվ 9/1:
3. Պարտավորեցնել քաղ. Յուրի Սանթրոսյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

27 հունվար 2012թ.

ՔԱՂ. ԱՐՍԵՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2011թ. դեկտեմբերի 19-ի թիվ 728 որոշմամբ 2012թ. հունվարի 27-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 67.5քմ հողամաս /Լոտ-51(ՔՀ-11), Գայի փողոց թիվ 41 /, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 168750 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 202500 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Հովսեփյան փողոց թիվ 29 տան բնակիչ Արսեն Հախվերդյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Գայի փողոց թիվ 41 հասցեի 67.5քմ մակերեսով հողամասը, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Հովսեփյան փողոց թիվ 29 տան բնակիչ Արսեն Հախվերդյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ

պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Արսեն Հախվերդյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 202500 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 8438 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

27 հունվար 2012թ.

ՔԱՂ. ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. դեկտեմբերի 19-ի թիվ 727 որոշմամբ, 2012թ. հունվարի 26-ին կառուցապատման իրավունքի մրցույթի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 2200.0քմ հողամաս /ԼՈՏ-7(ՔԿ-11), Սովետների փողոց թիվ 37/2 /, 70 տարի ժամկետով, հանգստյան գոտու կառուցապատման նպատակով, 26400 դրամ տարեկան վճարի մեկնարկային գնով:
Կայացած մրցույթում 31680 դրամ տարեկան վճարի առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Խորհուրդների փողոցի I նրբ. թիվ 12 տան բնակիչ Արամ Խաչատրյանը, որի մասին մրցութային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 2 արձանագրությունը:
Նշված հողամասը գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ ալ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 78, 80, 81 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» /Սովետների թիվ 37/2 հասցեի/ 2200.0քմ հողամասը 70 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել քաղ. Արամ Խաչատրյանին: Հողամասի տարեկան վճար սահմանել մրցույթում առաջարկված առավելագույն գինը, այն է՝ 31680 դրամ:
2. Կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական

վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Արամ Խաչատրյանին.
1) Հողամասի կառուցապատումն իրականացնել Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված 20.12.2011թ. թիվ 7 (ՔԿ-11) ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

27 հունվար 2012թ.

ՔԱՂ. ԳԱԳԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. դեկտեմբերի 19-ի թիվ 727 որոշմամբ, 2012թ. հունվարի 26-ին կառուցապատման իրավունքի մրցույթի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 2000.0քմ հողամաս /ԼՈՏ-6(ՔԿ-11), Սայաթ-Նովա փողոց թիվ 50/1 /, 70 տարի ժամկետով, հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման նպատակով, 40000 դրամ տարեկան վճարի մեկնարկային գնով:
Կայացած մրցույթում 48000 դրամ տարեկան վճարի առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 48 տան բնակիչ Գագիկ Թովմասյանը, որի մասին մրցութային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ ալ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 78, 80, 81 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» /Սայաթ-Նովա թիվ 50/1 հասցեի/ 2000.0քմ հողամասը 70 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել քաղ. Գագիկ Թովմասյանին:
Հողամասի տարեկան վճար սահմանել մրցույթում առաջարկված առավելագույն գինը, այն է՝

48000 դրամ:

2. Կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները պետական գրանցման:

3. Պարտավորեցնել քաղ. Գագիկ Թովմասյանին.

1) Հողամասի կառուցապատումն իրականացնել Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված 20.12.2011թ. թիվ 6 (ՔԿ-11) ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

31 հունվար 2012թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող «Միթի Պետրոլ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտ է ներկայացրել քաղաքապետարան՝ իր սեփական ձեռնարկատիրական օբյեկտում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների մանրածախ առևտուր իրականացնելու թույլտվություն ստանալու համար:

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող անհատ ձեռնարկատեր Գրիգոր Օղաբաշյանը հայտ է ներկայացրել քաղաքապետարան թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առևտուր իրականացնելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի ժ) ենթակետի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել «Միթի Պետրոլ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և տալ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների մանրածախ առևտուր իրականացնելու թույլտվություն 01.01.2012թ-ից մինչև 31.12.2012թ. ժամանակահատվածի համար:
2. Բավարարել անհատ ձեռնարկատեր Գրիգոր Օղաբաշյանի հայտը և տալ թույլտվություն

01.01.2011թ. - 31.12.2011թ. ընկած ժամանակահատվածում, իր տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առևտուր իրականացնելու համար:
3. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին. տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր տարվա համար, Դիլիջանի համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ